ՀՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱ

ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

ՀԱՏԻԿՅԱՆ ՀԱԿՈԲ ՀԱՐՈՒԹՅՈՒՆԻ

ԱՐԵՎՄՏԱՀԱՅՈՒԹՅՈՒՆՆ ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ԳԱՂՏՆԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ 1878-1923 ԹԹ.

Է.00.01 «Հայոց պատմություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման ատենախոսության սեղմագիր

ԵՐԵՎԱՆ-2015

Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում:

Գիտական ղեկավար պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Ավագյան Ա. Գ.

Պաշտոնական ընդդիմախոսներ պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր Վիրաբյան Վ. Հ.
պատմական գիտությունների թեկնածու, Անումյան Մ. Վ.

Առաջատար կազմակերպություն ՀՀ ՊՆ Դ. Կանայանի անվան Ազգային ռազմավարական հետազոտությունների ինստիտուտ

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է 2015 թ. դեկտեմբերի 25-ին, ժամը 14^{00}-ին, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում գործող ԲՈՀ-ի Հայոց պատմության 004 մասնագիտական խորհրդում (հասցեն՝ 0019, ք. Երևան, Մարշալ Բաղրամյան պող. 24/4):

Ատենախոսությանը կարելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրն առաքված է 2015 թ. նոյեմբերի 24-ին:

Մասնագիտական խորհրդի գիտական քարտուղար,
պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ Մուրադյան Հ.Ղ.

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

ԹԵՄԱՅԻ ԳԻՏԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ: Թուրքիայի Հանրապետության հատուկ ծառայությունների կողմից հայ ժողովրդի դեմ իրականացվող գործունեության պայմաններում անհրաժեշտություն է ծագում նաև այլ տեսանկյունից անդրադառնալ 19-րդ դարավերջի և 20-րդ դարասկզբի արևմտահայության պատմությանը, փորձել հասկանալ հայ ազգային-ազատագրական պայքարի ձախողումների ու առանձին դեպքերում հաջողությունների խորքային, երբեմն հատուկ ծառայությունների գործելաոճին անծանոթ մասնագետների համար անտեսանելի հանգամանքները, դասեր քաղել դրանցից և մշակել համապատասխան հակամիջոցներ՝ ներկայիս սպառնալիքների հակազդմանն ուղղված առավելագույնս արդյունավետ պայքար մղելու համար:

Օսմանյան կայսրության գաղտնի ծառայությունների, ինչպիսիք էին «Յըլդըզ» հետախուզական ծառայությունը (Yıldız İstihbarat Teşkilatı) և «Հատուկ կազմակերպությունը» (Teşkilat-ı Mahsusa), որի ժառանգորդ է հանդիսանում Թուրքիայի ներկայիս Ազգային հետախուզական կազմակերպությունը (Milli İstihbarat Teşkilatı), առավել կատարելագործված միջոցներով, մեթոդներով, լայնածավալ մարդկային ու նյութական ներուժով, ինչպես նաև օգտագործելով Ադրբեջանի Հանրապետության ողջ ռազմա-քաղաքական և դիվանագիտական զինանոցը, շարունակում է հակահայկական գործունեությունը գրեթե նույն ձեռագրով և հետախուզական-քայքայիչ գործողությունների այն տրամաբանությամբ, որոնք բնորոշ էին օսմանյան Թուրքիայի գաղտնի ծառայություններին:

Թեմայի արդիականությունը պայմանավորված է դեռևս չուսումնասիրված հիմնախնդրի, այն է՝ արևմտահայության ազգային-ազատագրական պայքարի կասեցմանն ուղղված Օսմանյան կայսրության, ինչպես նաև դրա ժառանգորդը հանդիսացող Թուրքիայի Հանրապետության գաղտնի ծառայությունների գործունեության պարզաբանման, դրան առնչվող պատմական փաստերի վերհանման կարևորությամբ:

Նշված ժամանակահատվածի պատմության էջերի առանցքներն ուսումնասիրված են հայ և օտարերկրյա պատմաբանների կողմից: Արևմտահայության ազատագրական պայքարին նվիրված աշխատությունները հիմնականում հետազոտվել են ռազմա-քաղաքական, սոցիալ-տնտեսական, ժողովրդագրական, իրավական և այլ ուղղություններով: Սակայն կարևոր ու դեռևս չուսումնասիրված ոլորտներից է հայ ազգային-ազատագրական պայքարի առանձնահատկություններին վերաբերող առանձին խնդիրների ուսումնասիրումը և պարզաբանումը, որոնք շաղկապված են օսմանյան Թուրքիայի գաղտնի ծառայությունների գործունեության հետ: Ընտրված թեմայի այժմեականությունն առավել ընդգծվում է նրանով, որ թուրքական հատուկ ծառայությունների հակահայկական գործունեության մեթոդաբանությունն ու գործելաոճն ընդհանուր առմամբ շարունակվում են մինչ օրս:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ: Ատենախոսության հիմնական նպատակն է գիտականորեն վերլուծել և պարզաբանել Օսմանյան կայսրության գաղտնի ծառայությունների գործունեության այն հատվածը, որի թիրախ էր հանդիսանում արևմտահայության ազգային-ազատագրական պայքարը, ինչպես նաև լուսաբանել արևմտահայության առանձին գործիչների շփումները թուրք պետական, քաղաքական, հասարակական կազմակերպությունների ներկայացուցիչների հետ, բացահայտել դրանց բնույթը, գնահատել այդ շփումների արդյունքում հայ գործիչների կողմից ընդունած որոշումներն ու իրականացրած գործողությունները:

Ատենախոսության նպատակներից են նաև՝

- համակողմանի հետազոտել արևմտահայության առանձին, այդ թվում, գաղտնի կազմակերպությունների պայքարի ձևերն ու մեթոդները Օսմանյան կայսրության հետախուզական մարմինների և գաղտնի ոստիկանության գործունեության դեմ պայքարի համատեքստում, գնահատել դրանք մարտական գործողությունների մարտավարության պահանջների տեսանկյունից ու վեր հանել ձախողումների իրական պատճառները.

- հետազոտել Օսմանյան կայսրության գաղտնի ծառայությնունների, մասնավորապես, գաղտնի ոստիկանության և «Հատուկ կազմակերպության» կառուցվածքը, ուժերը, միջոցները, ավանդույթները, բացահայտել աշխատանքի ձևերը, մեթոդներն ու եղանակները, ի հայտ բերել դրանց գործակալական ապարատի կառուցվածքն ու օպերատիվ-հետախուզական միջոցառումների ռազմավարությունն ու մարտավարությունը:

Նշված նպատակներին հասնելու համար առաջ են քաշվել հետևյալ խնդիրները.

- Օսմանյան կայսրության գաղտնի ծառայությունների կազմավորման, դրանց գործունեության բնույթի ուսումնասիրումը ճնշված ժողովուրդների ազգային-ազատագրական պայքարի համատեքստում,

- Աբդուլ Համիդ 2-րդի կառավարման տարիներին արևմտահայության ազգային-ազատագրական պայքարի ճնշման գործում «Յըլդրզ» կազմակերպության դերակատարության քննությունը,

- Արևմտյան Հայաստանում 1894-1908 թթ. զանգվածային կոտորածների վերլուծությունը «Յըլդրզ» - 4-րդ բանակ - համիդիե եռանկյուն ուժային համակարգի գործունեության համատեքստում,

- հայ ազգային կուսակցությունների վերաբերյալ Օսմանյան կայսրության դիվանագիտական ներկայացուցչությունների կողմից հետախուզական բնույթի տեղեկությունների հայթայթման ու իրացման գործընթացի լուսաբանումը,

- «Հատուկ կազմակերպության» կազմավորման, կառուցվածքի, խնդիրների, գործառույթների, գործելակերպի ուսումնասիրումը, ինչպես նաև գործակալական ապարատի կառուցվածքի բացահայտումը,

- Հայոց ցեղասպանության կազմակերպման և իրականացման գործում «Հատուկ կազմակերպության» դերի ու նշանակության լուսաբանումը,

- Հայաստանի Առաջին Հանրապետության հատուկ ծառայությունների հետախուզական գործունեության այն հատվածի ուսումնասիրումը, որն առնչվում է Թուրքիայում ծավալված ազգայնական շարժման հետ,

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴԱԲԱՆԱԿԱՆ ՀԻՄՔԸ: Ելնելով թեմայի առանձին հարցերի տեսական և գործնական առավել հանգամանալից լուսաբանման և վերլուծության անհրաժեշտությունից՝ կիրառվել են դիալեկտիկական, պատմահամեմատական, տրամաբանական, վերլուծական և նկարագրական մեթոդները:

Առանձին ուշադրություն է դարձվել հետախուզական գործունեության հատուկ մեթոդաբանությանը:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԳՐԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐԸ: Ատենախոսության ժամանակագրական սահմաններն ընդգրկում են 1878-1923 թթ., սակայն, մի շարք առանցքային հիմնահարցերի լուսաբանման անհրաժեշտությունից ելնելով, անդրադարձել ենք 19-րդ դարի 60-ական թվականներին: Ժամանակահատվածի ընտրությունը պայմանավորված է հետևյալ հանգամանքներով.

- թեմայի ելակետային դրույթն է արևմտահայության պայքարը և վերջիններիս բնաջնջման քաղաքականության կիրառումը Օսմանյան կայսրությունում: Հաշվի առնելով, որ Օսմանյան կայսրության պետականորեն մշակված առաջին ցեղասպանածին ծրագրերը թվագրվում են 19-րդ դարի 20-ական թվականների վերջերից[1], այս ժամանակահատվածի ուսումնասիրությունը թույլ է տալիս ուսումնասիրել կայսրության գաղտնի ծառայությունների գործելաոճը, ցույց տալ դրանց տեղն ու դերը ցեղասպանական ծրագրերի իրականացման գործում:
- 1920-ական թթ. ձևավորվեց հայ-քրդական համագործակցությունը, ինչը հանդիսացավ հանրապետական Թուրքիայի հատուկ ծառայությունների գործունեության հիմնական ուղղություններից մեկը:

Այսպիսով՝ աշխատության մեջ ժամանակագրական սահմաններից դուրս որոշակի տվյալների օգտագործումը հնարավորություն է տալիս բացահայտել արևմտահայության պայքարի և Օսմանյան կայսրության գաղտնի ծառայությունների գործունեության կարևոր առանձնահատկությունները և դրանց զարգացման միտումները, ինչն ատենախոսության նպատակներից և խնդիրներից ելնելով, խիստ արդիական է:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԿԱՆ ՆՈՐՈՒՅԹՆ ՈՒ ԳՈՐԾՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ: Ատենախոսության մեջ առաջին անգամ հետազոտվել է արևմտահայության ազգային-ազատագրական պայքարը թուրքական գաղտնի ծառայությունների գործունեության համատեքստում: Կատարված գիտական վերլուծության արդյունքներով ապացուցվել է, որ արևմտահայության ազգային-ազատագրական պայքարի ընթացքում արձանագրված մի շարք

[1] Սաֆրաստյան Ռ., Օսմանյան կայսրություն. Ցեղասպանության ծրագրի ծագումնաբանությունը (1876-1920թթ.), Եր., 2009, էջ 14, 118-119:

անհաջողությունների խորքային պատճառները կապված են օսմանյան կայսրության գաղտնի ծառայությունների գործունեության հետ: Առաջին անգամ գիտական շրջանառության մեջ են դրվել մի շարք սկզբնաղբյուրներ և արխիվային նյութեր Ռուսաստանի և Թուրքիայի արխիվներից: Հարկ է նշել, որ այդ աղբյուրներից շատերը միայն վերջերս են գաղտնազերծվել և տակավին հայտնի չեն մասնագետների լայն շրջանակներին:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԿԻՐԱՌԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ: Ատենախոսությունը հնարավորություն է տալիս պարզաբանել թուրքական գաղտնի ծառայությունների գործունեության բնույթը, որոշ մեթոդները, հայատյաց քաղաքականության ակունքները, ինչը կարող է օգտագործվել հետագա հատուկ մշակումների համար:

Հետազոտման արդյունքները կարող են օգտագործվել թուրքական գաղտնի ծառայությունների հակազդման պայմաններում հայ ազգային-ազատագրական պայքարի նոր օրինաչափությունների բացահայտման համար, ինչպես նաև ՀՀ ազգային անվտանգության ծառայության գիտաուսումնական կենտրոնում համապատասխան հատուկ առարկաների դասավանդման և գործնական պարապմունքների անցկացման, այլ շահագրգիռ գիտաուսումնական հաստատությունների, կազմակերպությունների ու անհատ հետազոտողների կողմից գիտական և գործնական մշակումների ընթացքում: Նշված արդյունքները կարող են նաև օգտագործվել ՀՀ ազգային անվտանգության մարմինների պրակտիկ գործունեության ընթացքում:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ՀԱՎԱՆՈՒԹՅՈՒՆԸ: Ատենախոսության թեման հաստատվել է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գիտական խորհրդում, քննարկվել և հրապարակային պաշտպանության է երաշխավորվել Պատմության ինստիտուտի նոր պատմության բաժնի կողմից: Ուսումնասիրության հիմնական դրույթները լուսաբանվել են հեղինակի հրատարակած հոդվածներում:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ: Աշխատության համար որպես սկզբնաղբյուր օգտագործվել են Հայաստանի ազգային արխիվում (ՀԱԱ), Ռուսաստանի պետական ռազմապատմական արխիվում (РГВИА), Ռուսական կայսրության արտաքին քաղաքականության արխիվում (АВПРИ), Թուրքիայի վարչապետին կից Օսմանյան արխիվում (TC Başbakanlık Osmanlı Arşivi - BOA), Վրաստանի պետական արխիվում պահպանվող նյութերը:

ՀԱԱ նյութերից օգտագործվել է գեներալ Ն.Մորելի գրառումներն[1], որոնք կարևոր տեղեկություններ են պարունակում Առաջին համաշխարհային պատերազմի տարիներին ռուս-թուրքական ռազմաճակատում գործող հայ հետախույզների մասին:

---

[1] ՀԱԱ, ֆ. 1267, ց. 2, գ. 201, Морель Н.М., К участию армян в Мировой войне 1914-1918 гг. Действие на Кавказском фронте в период декабрь 1917 года – апрель 1918 г. Подлинник, рукопись, на русском языке.

Կարևոր տեղեկություններ են պարունակում նաև ՀՀ Հայկական բանակի հետախուզական բաժանմունքի պետ Տիգրան Դևոյանցի զեկուցագրերը[1], որոնք վկայում են հայ հետախույզների արդյունավետ գործունեության մասին թշնամու թիկունքում:

Օսմանյան կայսրության գաղտնի ծառայությունների կազմավորման, կառուցվածքի, գործունեության ուղղվածության, ձևերի և մեթոդների վերաբերյալ հարուստ տեղեկություններ են հաղորդում Ռուսաստանի արխիվները, որոնցից մի քանի փաստաթուղթ առաջին անգամ է դրվում գիտական շրջանառության մեջ[2]: Թուրքական արխիվային նյութերից օգտագործել ենք Օսմանյան կայսրության Ներքին գործերի նախարարության ֆոնդի առանձին նյութերը, որոնք նույնպես առաջին անգամ են դրվում գիտական շրջանառության մեջ և նոր տեղեկություններ են հաղորդում գաղտնի ոստիկանության կողմից Հ.Յ. Դաշնակցության ու Սոցիալ-դեմոկրատական Հնչակյան կուսակցությունների աշխատանքները վերահսկելու կամ խափանելու վերաբերյալ[3]: Մասնավորապես՝ «Դաշնակցություն և Սոցիալ դեմոկրատական Հնչակյան կուսակցությունների մասին» վերնագրով ՆԳ նախարարության քաղաքական բաժնի (DH SYS) ֆոնդի 65-րդ թղթապանակի նյութերը, որոնք պարզաբանում են գաղտնի ոստիկանության հետախուզական աշխատանքի յուրահատկությունը և հայ ազգային կուսակցություններին հետևելու մեթոդները:

Հրատարակված թուրքական արխիվային նյութերից օգտագործվել է Օսմանյան արխիվների գլխավոր տնօրինության կողմից հրատարակված «Հայկական կոմիտեները (1891-1895)» փաստաթղթերի ժողովածուն[4], որում տեղ են գտել նաև Օսմանյան կայսրության գաղտնի ոստիկանության և հետախուզական կառույցի կողմից մեծ վեզիրին ու սուլթանին ներկայացված զեկուցագրերը հայ ազգային կուսակցությունների վերաբերյալ:

Վրաստանի պետական արխիվից օգտագործվել է Օսմանյան կայսրությունում ռուս հետախույզների տեղեկությունները պարունակող նյութերը, որոնք վերաբերում են Կովկասում բրիտանական և թուրքական

---

[1] ՀԱԱ, Ֆ. 200, ց.1, գգ. 42, 158, 441, 427, ֆ. 204, ց. 1, գ. 133:

[2] Архив Внешней Политики Российской Федерации (АВПРФ), ф. 151, ф. НАИ, серия А, д. 154, л. 34-35; Политархив, оп. 482, д. 1630, л. 134-135, РГВИА, ф. 2000, ГУГШ, оп I, док. N 1935, 2003, 2085, 2220, 2464-2466, 5171, ф. 5, д. 434, ф. 6, д. 891А; История шпионажа и службы по сбору информацй. Рукописный перевод с венгерского, т. 1, СПб, 1936; АВП РФ, Азиатский департамент, д. 6, л. 4, д. 166, л. 53 (Записка о разысканиях следов шамилева гонцах к шейху Таха. Дополнение к сведениям, изложенным Ханьковым).

[3] Տե՛ս TC Başbakanlık Osmanlı Arşivi – BOA, DH, SYS, dosya 65, vesika 2: Օսմանյան արխիվային նյութերը մեզ է տրամադրել մեր գիտական ղեկավար պ.գ.դ., պրոֆ. Արսեն Ավագյանը, ով 2004-2005 թթ. ուսումնասիրություններ է կատարել Ստամբուլի օսմանյան արխիվում:

[4] Տե՛ս Ermeni Komiteleri (1891-1895), Ankara, 2001.

հետախուզությունների փոխհամագործակցությանը[1]:

Խնդրի լուսաբանմանը նվիրված, օգտագործվել են նաև ռուսական, ռուսերեն թարգմանված[2], ինչպես նաև՝ թուրք հեղինակների[3] աշխատությունները:

Թեմայի համակողմանի հետազոտման համար կարևոր փաստագրական նյութեր են պարունակում «Արևմտյան Հայաստանի մասին Բրիտանական փաստաթղթերը»[4], որոնց մի մասի հնարավոր սուբյեկտիվ լինելու հանգամանքով պայմանավորված, դրանք օգտագործելիս դրսևորել ենք քննադատական մոտեցում: Ուշագրավ են նաև Կ.Պոլսում Մեծ Բրիտանիայի դեսպան Դուֆֆերինի 1881 թ. դեկտեմբերին իր ղեկավարությանն ուղղված զեկուցագրերը, որոնք բացահայտում են Օսմանյան կայսրության արտաքին գործերի քարտուղարի տեղակալ Արթին Էֆենդիին որպես բրիտանական դիվանագիտական ծառայությունների, հետևաբար, հետախուզության համար սուլթանի ծրագրերի ու մտահղացումների մասին գաղտնի տեղեկատվության աղբյուր[5]:

Թեմայի հետազոտման առանցքայի աղբյուրագիտական հենքերից է «Հայերի ցեղասպանությունը ըստ երիտթուրքերի դատավարության փաստաթղթերի» ժողովածուն[6]: Տրապիզոնում տեղահանության և կոտորածի վերաբերյալ դատավարության նյութերը թույլ են տալիս պատկերացում կազմել «Թեշքիլաթը մահսուսա»-ի գործակալական ցանցի կառուցվածքի, ինչպես նաև գաղտնի աշխատանքներում առանձին անձանց ներգրավելու

---

[1] Տե՛ս ЦГИАГ, ф. 11, оп. 2, д. 278, лл. 2-3.

[2] Տե՛ս Новичев А. Д., История Турции, т. 1, Ленинград, 1963; Турецкий шпион при дворах христианских государей, СПб, 1778, перев. с франц; Джинчарадзе В. З., История контрразведки в России, «Пограничник», 1946, NN 10, 13; Смирнов Н. А., Турецкая агентура под флагом ислама, «Вопросы истории, религии и атеизма», М., 1950; Венедиктов Б. Н., Использование панисламизма и пантюркизма разведками империалистических государств, М., 1958; Лудшувейт Е. Ф., Турция в годы первой мировой войны, М., 1966; Бабаходжаев А., Провал панисламистской авантюры английского ставленника Энвера в Средней Азии в 1921-1922 г.г., «Звезда Востока», Ташкент, 1951, N 12; Фелицин Е.Д., Князь Сефер бей Зан, политический деятель и поборник независимости черкесского народа, Кубанский сборник, т. X, с. 81.

[3] Տե՛ս Tarık Zafer Tunaya, Türkiye'de Siyasal Partiler, cilt 3, İttihat ve Terakki, Bir Çağın, Bir Kuşağın, Bir Partinin Tarihi, İstanbul, 2000; Dr.Mustafa Balcioglu, Teskilat-I Mahsusa`dan Cumhuriyete, Ankara, Nobel Yayin Dagitim, 2001.

[4] Տե՛ս British documents on Ottoman Armenians, vol. 1, (1856-1880), vol. II (1880-1890), Ankara, 1982.

[5] British documents... էջ 261:

[6] Տե՛ս Փափազյան Ա. Հ., Հայերի ցեղասպանությունը ըստ երիտթուրքերի դատավարության փաստաթղթերի, Եր., 1989, էջ 167, 168:

առանձնահատկությունների մասին: Պատահական չէր, որ Բ. Շաքիրը, գտնվելով պաշտոնական հարաբերությունների մեջ ՀՅԴ ղեկավարության հետ, վերջիններիս շրջանում ուներ գործակալ, որը նրան ապահովում էր անհրաժեշտ տեղեկատվությամբ[1]:

Օսմանյան կայսրության հետախուզական գործունեության միջոցների, մեթոդների և ձևերի մասին արժանահավատ տեղեկություններ է հայտնում Օսմանյան կայսրության ոստիկանապետ Մ. Խաղժետլաշեն[2], ով մանրամասնորեն նկարագրում է «Յըլդըզ» պալատի կառուցվածքն ու գործունեությունը և ընդգծում, որ բոլոր հարցերը լուծվում էին պալատում և պալատի գործակալների օգնությամբ:

Առանձնահատուկ ուշադրության են արժանի Օսմանյան կայսրության Ներքին գործերի նախարար Նազըմ փաշայի հուշերը[3], որոնք կոնկրետ դեպքերով, փաստերով ու անուններով բացահայտում են, թե՛ ոստիկանության հետախուզական գործունեության առանձնահատկությունները՝ ուղղված հայկական «կոմիտեճիների» դեմ, թե՛ հայ հեղափոխականների շրջանում տիրող իրավիճակը:

Խաղժետլաշեի և Նազըմ փաշայի հաղորդած տեղեկությունները ճշտելու ու իրադարձությունները համադրելու նպատակով ատենախոսության մեջ օգտագործվել են նաև սուլթան Աբդուլ Համիդ 2-րդի քարտուղար Թահսին փաշայի հուշերը, որոնք հանդիսանում են այդ շրջանի իրադարձությունների և գաղտնի ծառայությունների գործունեության լուսաբանման համար օգտագործվող հիմնական աղբյուրներից մեկը[4]:

Կայսրության գաղտնի ծառայությունների կողմից վերահսկման մեխանիզմների կիրառման պայմաններում կարևորում ենք հայ առանձին հեղափոխական գործիչների գործունեությունն իրենց քողարկումը ապահովող առասպելապատման մշակման ուղղությամբ: Այս առումով՝ նորահայտ արժեքավոր նյութերը լուսաբանում են ՀՅԴ գործիչ՝ Միքայել Տեր-Հովհաննիսյանի դրսևորած առանձնահատուկ ունակություններն ու հմտություններն օսմանյան Թուրքիա իր ներթափանցումը կազմակերպելիս[5]:

1890-ական թվականներին Արևմտյան Հայաստանում ՀՅԴ-ի կազմակերպական կառույցների ձևավորման գործընթացի մասին արժեքավոր

---

[1] Տե՛ս Teskilati Harpte Teskilati Mahsusa. «Vakit», 15-17, 11, 1933.

[2] Տե՛ս Хаджетлаше М. Б., Убийца на троне (Записки начальника тайной полиции в Турции), Петроград, 1918.

[3] Նազըմ փաշայի հուշերը. հայոց դահիճը կը պատմէ…, «Յառաջ» օրաթերթ, Փարիզ, 1931, թիվ 1648-1738:

[4] Տե՛ս Sultan Abdül Hamid, Tahsin Paşa'nın Yıldız Hatıraları, İstanbul, 1999.

[5] Միքայել Տեր-Հովհաննիսյանի հուշերը, Ստեփանավան-Ծաղկաձոր, 1926-1927 թթ.: Նյութերը տրամադրել է պ.գ.դ. Ռ.Սահակյանը:

տեղեկություններ է պարունակում Գ. Խուդինյանի աշխատությունը[1]: Աշխատությունը կարևոր տեղեկություններ է հաղորդում մի շարք հայ լրտեսների ու մատնիչների մասին, որոնց նկատմամբ ՀՅԴ-ի կողմից կազմակերպվեցին ահաբեկչական գործողություններ[2]:

Հնչակյան կուսակցության և հայ ազգային կուսակցությունների գործունեության ուղղվածության մասին կարևոր տեղեկություններ են պարունակում Կ.Իզմիրլյանի աշխատությունը[3]: Ուշագրավ են նաև Մաթեոս Իզմիրլյան պատրիարքի և Ներսես Խարախանյան վարդապետի ՀՅԴ երրորդ ընդհանուր ժողովին ուղղված վերլուծական նամակները Երկրի անցյալի, ներկայի և ապագայի վերաբերյալ, որոնցում կարևորվում էր բոլոր փոքրաթիվ ազգերի՝ հայերի, քրդերի, ասորիների ընդհանուր անկախ դաշնակցությունը[4]:

Օսմանյան կայսրության և Թուրքիայի Հանրապետության գաղտնի ծառայությունների պատմության, գենեզիսի, գործելաոճի և իրականացված գործողությունների ուսումնասիրության տեսակետից արժեքավոր է թուրք հետազոտող, թուրքական գաղտնի ծառայության պատմության մասնագետ Թունջայ Օզքանի «Թուրքիայի հետախուզական ծառայության (MIT) գաղտնի պատմությունը» մենագրությունը, որտեղ կողմնակալության հետ մեկտեղ հեղինակը կարևոր տեղեկություններ է հաղորդում տարբեր ժամանակաշրջաններում Օսմանյան կայսրությունում և Թուրքիայում գոյություն ունեցող գաղտնի ծառայությունների մասին[5]:

Թուրք հեղինակ՝ Բորա Իյիաթը, գոյություն ունեցած թուրքական գաղտնի ծառայությունների կազմավորումն ու գործունեությունը դիտարկում է ժամանակակից Թուրքիայում գոյություն ունեցող այսպես կոչված «խորքային պետության» ձևավորման համատեքստում՝ ուսումնասիրության հիմնական շեշտը դնելով խորքային պետության ստեղծման և գործունեության ոլորտում գաղտնի ծառայությունների ունեցած դերակատարության վրա[6]:

«Հատուկ կազմակերպությանն» առնչվող հարցերի ուսումնասիրության համար օգտագործվել են թուրք պատմաբաններ Էմին Դեմիրելի «Գաղտնի կազմակերպությունները «Հատուկ կազմակերպությունից» մինչ մեր օրերը»[7] և Էրգյուն Հիչյըլմազի «Հատուկ կազմակերպությունը» և հետախուզական կազմակերպությունները» մենագրությունները[8]:

---

[1] Խուդինյան Գ., ՀՅ Դաշնակցության քննական պատմություն (ակունքներից մինչև 1895 թվականի վերջերը), Եր., 2006:

[2] Նույն տեղում, էջ 320, 328:

[3] Իզմիրլեան Կ., Հայ ժողովրդի քաղաքական ճակատագիրը անցյալին և ներկայիս, Պեյրույթ, 1964, էջ 129:

[4] «Հայրենիք», 1931, թիվ 9:

[5] Տե՛ս Tuncay Özkan, Milli İstihbarat Teşkilatı (MİT)'in Gizli Tarihi, İstanbul, ALFA, 2003.

[6] Տե՛ս Bora İyiat, Hunlardan Günümüze Türk Derin Devleti, Ankara, 2008.

[7] Տե՛ս Emin Demirel, Teşkilat-ı Mahsusa'dan Günümüze Gizli Servisler, İstanbul, 2002.

[8] Տե՛ս Ergun Hiçyılmaz, Teşkilat-ı Mahsusa ve Casusluk Örgütleri, İstanbul, 1996.

Հայրենի պատմագիտության կողմից հանգամանալից ուսումնասիրված է արևմտահայության ազգային-ազատագրական պայքարի պատմությունը[1], ինչը ատենախոսության համար հիմք է ծառայել, սակայն այդ պայքարի առանձին դրսևորումների, ինչպես նաև Օսմանյան կայսրության գաղտնի ծառայությունների հակահայկական գործունեության ուղղությունների, ձևերի և մեթոդների վերաբերյալ նյութերը սակավ են: Այս առումով՝ թեմային առնչվող աղբյուրագիտական արժեքավոր փաստագրական նյութեր են պարունակում Ա. Ավագյանի աշխատությունները[2], որոնցում քննության են առնված թուրքական գաղտնի ծառայությունների կազմավորումը և հայաջինջ գործունեությանը վերաբերող առանձին խնդիրները:

Ուշագրավ է նաև Միքայել Վարանդյանի աշխատությունը[3], որում թեմային առնչվող կարևոր տեղեկություններ կան հայկական և թուրքական գաղտնի կազմակերպությունների կազմավորման ու գործունեության մասին: Մասնավորապես, այդ կազմակերպությունների համար, իր գաղտնի՝ մասոնական կառուցվածքի շնորհիվ օրինակ էր ծառայում Իտալիայի միավորման ընթացքում արդյունավետ դերակատարություն ունեցած «Երիտասարդ Իտալիա» կազմակերպությունը:

Ուշադրության է արժանի ռուսական հետախուզության գեներալ-մայոր Լև Սոցկովի գիրքը[4], որում օգտագործվել են ՌԴ-ի արտաքին հետախուզության արխիվում պահվող բազմաթիվ փաստաթղթեր, որոնք բացահայտում են կովկասյան տարածաշրջանում թուրքական հատուկ ծառայությունների գործելակերպը և ռազմավարությունը:

Թեմայի ուսումնասիրման համար աղբյուրագիտական բացառիկ արժեք

---

[1] Տե՛ս Գալուստյան Գր., Մարաշ կամ Գերմանիկ և հերոս Զեյթուն, Նիւ-Եորք, 1934; Ներսիսյան Մ.Գ., Հայ ժողովրդի ազատագրական պայքարը թուրքական բռնապետության դեմ 1850-1870 թթ., Եր., 1955; Համբարյան Ա.Ս., Երիտթուրքերի ազգային ու հողային քաղաքականությունը և ազատագրական շարժումները Արևմտյան Հայաստանում, Եր., 1979; Կիրակոսյան Ջ. Կ., Բուրժուական դիվանագիտությունը և Հայաստանը (19 դ. 80-ական թթ.), Եր., 1980; Համբարյան Ա. Ս., Հայ հասարակական քաղաքական միտքը արևմտահայության ազատագրական ուղիների մասին, Եր., 1990; Սիմոնյան Հր. Ռ., Թուրք-հայկական հարաբերությունների պատմությունից, Եր., 1991; Գալոյան Գ., Հայաստանը մեծ տերությունների աշխարհակալական առճակատումներում, Եր., 2004; Тунян В. Г., Младотурки и Армянский вопрос, Ереван, 2004 և այլն:

[2] Տե՛ս Ավագյան Ա., Հյուսիսկովկասյան քաղաքական վտարանդիությունը Թուրքիայի արտաքին քաղաքականության համատեքստում (1920-1971 թթ.), Եր., 2011, նույնի՝ Геноцид армян: механизмы принятия и исполнения решений, Ереван, 2013.

[3] Տե՛ս Վարանդեան Մ., Հ.Յ. Դաշնակցութեան պատմութիին, Եր., 1992, էջ 52-53:

[4] Տե՛ս Соцков Лев, Неизвестный сепаратизм. На службе СД и Абвера (htt: lib.tr200.net.v.php.id.4848sp.15).

է ներկայացնում ազատագրական շարժման նշանավոր գործիչ Ռուբեն Տեր-Մինասյանի հուշերը[1]: Հեղինակը որպես դեպքերի անմիջական մասնակից՝ առանձնակի կարևորությամբ է շեշտում հայ գործիչների պայքարի վտանգավորության բարձր աստիճանն Օսմանյան կայսրության գաղտնի ծառայությունների և դրանց գաղտնի գործակալների գործունեության հակազդման պայմաններում: Նշենք, որ Ռուբենը այն եզակի հեղինակներից է, որը թշնամու գաղտնի ծառայությունների գործունեության էությունը ձևակերպել է իր ամբողջ խորությամբ[2]:

Հայազգի Մելքոն խանի լրտեսական գործունեության վերաբերյալ ուշագրավ տեղեկություններ է հայտնում Սապահ-Գյուլեանը[3]:

Սույն ատենախոսության խնդիրների լուծման տեսանկյունից կարևոր նշանակություն է ունեցել Ռ. Սահակյանի հոդվածը, որտեղ լուսաբանվում է, թե ինչպես դեռևս 1914 թ. նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներին «Թեշքիլաթի մահուսա»-ն համակարգել ու իրագործել է Բաթումի նահանգում և Կարսի մարզում հայերի զանգվածային կոտորածները և բնակավայրերի կողոպուտը[4]:

Օգտագործվել են նաև հայ հետախույզների գործունեությանը նվիրված Ռ. Սահակյանի հոդվածները[5], որոնցում լուսաբանվել են Առաջին աշխարհամարտի տարիներին Արևմտյան Հայաստանում գործող հետախուզական «Հայկական շտաբիի» աշխատանքները, ինչպես նաև Հայկական բանակի հետախուզական բաժանմունքի գործունեությունը:

Թեմայի հիմնահարցերի առավել ամբողջական և համակողմանի հետազոտման նպատակով օգտագործվել են Վ. Վիրաբյանի «Հայաստանի Հանրապետության պետական անվտանգության համակարգի ստեղծումը և գործունեությունը 1918-1920 թթ.»[6] աշխատությունում քննության առնված

---

[1] Տէր-Մինասեան Ռուբէն, Հայ յեղափոխականի մը հիշատակները, Պեյրութ, հ. 6, 1983:

[2] Տե՛ս ատենախոսության 38-րդ էջը: Հանրագիտարաններում կամ հատուկ գրականության մեջ տեղ գտած հատուկ ծառայությունների վերաբերյալ սահմանումները մասնագետների շրջանում մշտապես բանավեճի առարկա են:

[3] Սապահ-Գյուլեան, Պատասխանատուները, Պրովիդենս, 1916, էջ 143:

[4] Տե՛ս Սահակյան Ռ., Բաթումի նահանգի հայության կողոպուտն ու սպանությունները Ա. Համաշխարհայինի սկզբում 1914-ի աշնան (փաստաթղթեր), Հայկազեան Հայագիտական Հանդէս, Պեյրութ, 2013, էջ 29-36:

[5] Տե՛ս Սահակյան Ռ., Առաջին համաշխարհային պատերազմի նախօրյակին և ընթացքում ռուս-թուրքական ռազմաճակատում հետախուզական ծառայությունների պատմությունից, Պատմաբանասիրական հանդես, 2011, թիվ 3, էջ 94-119; Հայկական բանակի հետախուզական բաժանմունքի պետ Տիգրան Դևոյանցի զեկուցագրերը թուրքական բանակի մարտակազմի վերաբերյալ, Լրաբեր հասարակական գիտությունների, 2010, թիվ 1-2, էջ 458-460, 470-483:

[6] Վիրաբյան Վ., Հայաստանի Հանրապետության պետական անվտանգության համակարգի ստեղծումը և գործունեությունը 1918-1920 թթ., Եր., 2006:

Հայաստանի Առաջին Հանրապետության նորաստեղծ հետախուզության Արևմտյան Հայաստանում ծավալած գործունեությանը վերաբերող փաստագրական տվյալները, ինչպես նաև Կ.Պոլսում հայկական հետախուզական աշխատանքների կազմակերպիչ հետախույզ Տ. Դևոյանցի հուշերը[1]: Վերջինիս կողմից թշնամու թիկունք գործակալական ներթափանցման եղանակով ստեղծված ծպտյալ գործակալական ցանցի միջոցով անհրաժեշտ կանխարգելիչ տեղեկությունների հայթայթման արդյունքում կազմված զեկուցագրերի ուսումնասիրությունները թույլ են տալիս օբյեկտիվ գնահատել իրավիճակն ամբողջ Արևմտյան Հայաստանում:

Թեմայի հետազոտման շրջանակներում ուսումնասիրվել են նաև քեմալական գաղտնի ծառայությունների կողմից քրդերի՝ որպես գործակալների հավաքագրման փաստերն ու գործընթացները[2], որոնք թույլ են տվել զուգահեռներ անցկացնել Օսմանյան կայսրության գաղտնի ծառայությունների կողմից առանձին անձանց հավաքագրման ձևերի, մեթոդների և մարտավարության հետ:

Հետազոտական աշխատանքների ընթացքում օգտագործվել է նաև ժամանակի մամուլը՝ «Անահիտ թերթ-հանդես», «Արձագանք», «Դրօշակ», «Հայաստան», «Հայրենիք», «Հնչակ», «Մասիս», «Մեղու Հայաստանի», «Մշակ», «Մուրճ», «Յառաջ», «Նոր դար», «Նոր կեանք», «Փարիզ» պարբերականները:

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԿԱՌՈՒՑՎԱԾՔՆ ՈՒ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ: Ատենախոսությունը կազմված է ներածությունից, երեք գլխից, որոնք բաժանվում են ենթագլուխների, եզրակացությունից, օգտագործված աղբյուրների և գրականության ցանկից:

Ներածությունում ներկայացվում են ատենախոսության թեմայի արդիականությունը, նպատակներն ու խնդիրները, աշխատանքի մեթոդաբանական հիմքը և գիտական նորույթը, թեմայի ժամանակագրական սահմանները, հիմնավորվում է աշխատանքի կիրառական նշանակությունը, տրվում է աղբյուրների և գրականության տեսությունը:

Առաջին գլուխը՝ «Օսմանյան կայսրության գաղտնի ծառայությունների կազմավորումը և արևմտահայության պայքարը (19-րդ դարի 60-70-ական թթ.)» բաղկացած է երկու ենթագլուխներից՝ «Հպատակ ժողովուրդների ազգային-ազատագրական պայքարի գործոնը Օսմանյան կայսրության գաղտնի ծառայությունների զարգացման գործում» և «Արևմտահայությունն որպես Օսմանյան կայսրության գաղտնի ծառայությունների թիրախ (19-րդ դարի 60- 70-ական թթ.)»:

Առաջին ենթագլխում ներկայացվում են դեռևս 15-րդ դ. Օսմանյան կայսրության հետախուզական մարմինների կազմավորման գործընթացի

---

[1] Դևոյանց Տ., Կեանքիս դրուագներից, «Հայրենիք», Բոստոն, 1945, թիվ 2, էջ 52-54:

[2] Տե՛ս Բայբուրդյան Վ., Քրդերը, հայկական հարցը և հայ-քրդական հարաբերությունները պատմության լույսի ներքո, Եր., 2008; Гасратян М. А., Курдское движение в новое и новейшее время, М., 1987.

առանձնահատկությունները, մասնավորապես Վենետիկի Դիվանագիտական փոստային բյուրոյի, այնուհետև Գերմանիայի ու Մեծ Բրիտանիայի հզոր հետախուզությունների հետ համագործակցության արդյունքում ձեռք բերված հատուկ գիտելիքները, հմտությունները, ունակությունները: Պատահական չէր, որ Աբդուլ Համիդ 2-րդի օրոք՝ 1880-ական թթ. երկրորդ կեսին ստեղծված թուրքական առաջին հետախուզական «Յըլդըզ» կազմակերպությանը ստեղծվել է Մեծ Բրիտանիայի դեսպան Ստաֆորդ Քանինգի խորհուրդներով, մեծ վեզիր Մուստաֆա Ռեշիդ փաշայի կողմից: Հետախուզական տեղեկատվության հայթայթման նպատակով թուրք հետախույզները լայնորեն օգտագործել են դիվանագիտական ներկայացուցիչներին, առևտրականներին, հոգևորական-ներին, ուսանողներին, թափառականներին, ինչպես նաև քրիստոնյա այլազգի ներկայացուցիչներին, որոնք տարբեր դրդումներով և պատճառներով ընդունում էին մահմեդականություն: Օսմանյան կայսրության հետախուզության գործունեության առանձնահատկություններից էր, երբ իրենց կողմից կազմակերպված շարժումների և դավադրությունների ընթացքում, որպես կանոն, իրագործվում էին ահաբեկչական գործողություններ:

Օսմանյան կայսրությունում որպես հետախուզության գործունեության վառ օրինակ ներկայացվել է 1859 թ. Աբդուլ Մեջիդի դեմ ուղղված դավադրությունը՝ «Քուլելիի իրադարձություն»-ը, որի վերլուծությունը թույլ է տալիս եզրակացնել, որ դավադրությունն այդ ծառայությունների կողմից մշակված և իրագործված սադրանք էր, ինչը նպաստավոր պայմաններ ստեղծեց հակաքրիստոնեական արշավների համար:

Երկրորդ ենթագլխում անդրադարձ է կատարվում Օսմանյան կայսրության կառավարման ինքնատիպ միլիեթների համակարգին, ռազմական օկրուգների ստեղծմանը, վարչա-տարածքային վերաբաժանումներին, որոնք խոչընդոտում էին քրիստոնյա ժողովուրդների հավաք կերպով բնակեցումը մեկ վարչական միավորի շրջաններում, իսկ այդ շրջանների ազգային կազմը պետք է նպաստեր հայ ազատագրական պայքարի ձախողմանը:

Արևմտահայությունն առավել խոցելի դարձավ իր մեջ տեղ գտած հակասություններով, ինչը նպաստավոր պայմաններ էր ստեղծում կայսրության գաղտնի ծառայություններին քայքայիչ գործունեություն ծավալելու համար:

1860-ական թվականներին հայ-քրդական հարաբերություններում երկդիմի քաղաքականությունը իրագործում էր գաղտնի ոստիկանությունը՝ հավաքագրելով և նպատակային օգտագործելով նաև հայ ազգի ներկայացուցիչներին: Դրանցից մեկն էր Վանի հոգևոր առաջնորդ Պողոս վարդապետ Մելիքյանը, որը գաղտնի համագործակցելով Վասպուրականի շրջանի քուրդ ցեղապետերի ու ավատապետերի հետ, կողոպտեց ու թալանեց հարազատ ժողովրդին:

Կարևորվում է նաև այն հանգամանքը, որ պետականությունից զրկված և համապատասխան կառույցների բացակայության պայմաններում հայ գործիչների կայացրած քաղաքական բնույթի որոշումները պայմանավորված են եղել հակառակորդի կողմից հմտորեն մատուցված ապատեղեկատվությամբ:

Հավաստի տեղեկատվության բացակայության պայմաններում հնարավոր չէր իրավիճակին տալ օբյեկտիվ գնահատական և կայացնել ճիշտ որոշում:

Ատենախոսության **երկրորդ գլուխը՝** «Արևմտահայության ազգային-ազատագրական պայքարի ճնշման գործում» «ՅԸԼԴԸԶ» հետախուզական կազմակերպության դերակատարությունը» (1877-1908 թթ.) բաղկացած է չորս ենթագլուխներից:

Առաջին ենթագլխում՝ «Արևմտահայության ազատագրական կազմակերպությունների պայքարը սուլթանական գաղտնի ծառայությունների գործունեության ոլորտում» ներկայացվում են հայկական հեղափոխական կազմակերպությունների գործողությունները Օսմանյան կայսրությունում և վերջիններիս դեմ ուղղված «Յըլդըզ» հետախուզական կառույցի կողմից իրականացված հատուկ միջոցառումների մեթոդաբանությունը: Ներկայացված են նաև «Յըլդըզ»-ի կազմավորումը, կառուցվածքը, գործակալական ցանցը, անձանց հավաքագրման ձևերը, ինչպես նաև տեղեկատվության ստուգման եղանակները: Ուսումնասիրության ընթացքում փորձ է արվել վեր հանել Արևմտյան Հայաստանում ստեղծված կազմակերպությունների ձախողումների բուն պատճառները: Կարևորվել է թուրքական գաղտնի ծառայությունների գործակալների քայքայիչ գործողությունները, ինչպես նաև կազմակերպությունների առանձին ղեկավարների կողմից թույլ տրված սխալները:

Նշենք, որ հետախուզության ոլորտում անձի (հետախույզի) լեգալացման գործընթացը համարվում է բարդագույններից: Այս առումով՝ նորահայտ նյութերը[1] վկայում են հայ հեղափոխական գործչի՝ Միքայել Տեր-Հովհաննիսյանի, առանձնահատուկ ունակությունների ու հմտությունների մասին: Օսմանյան Թուրքիա ներթափանցելու նպատակով վերջինս կերպարանափոխվում է, փոխում իր անձնագիրը և ճանաչված է դառնում ոստիկանության ու տեղի բնակչության կողմից որպես Դմիտրի Մարտինով-Պոպով անունով բուլղարահպատակ մի ֆոնոգրաֆչի (լեգալ անձնավորություն): Կարծես թե քողարկումն ապահովված էր լիովին, սակայն Միքայել Տեր-Հովհաննիսյանի կապավոր՝ Մկրտիչ Հատիկյանի անզգույշ վարքագծի պատճառով ՀՅԴ գործչի անձը բացահայտվում է Հնչակյան կուսակցության անդամ ոմն Տիգրանի առջև, որն էլ մատնում է նրան ոստիկանությանը:

Հայ հեղափոխական կազմակերպությունների գործունեության ձախողումները պայմանավորված էին. ներկուսակցական և միջկուսակցական սուր հակասություններով, որոնք առանձին դեպքերում վերաճելով թշնամանքի, պարարտ հող էին ստեղծում լրտեսների ու մատնիչների համար, հայ գործիչների ոչ բավարար քողարկմամբ, թուրքական հետախուզության և ոստիկանության գրագետ գործունեությամբ:

Երկրորդ ենթագլխում՝ «Հայ ազգային կուսակցությունների վերաբերյալ տեղեկություններ հավաքելու և իրացնելու ուղղությամբ օսմանյան

[1] Միքայել Տեր-Հովհաննիսյանի հուշերը, էջ 103-128:

դիվանագիտական ներկայացուցչությունների գործունեությունը» ներկայացված է 1896 թ. հայ ազգային-ազատագրական պայքարի զարգացման փուլի գործոնը, որը ստիպեց Աբդուլ Համիդին քայլեր ձեռնարկել սուլթանական դիվանագիտական ներկայացուցիչների միջոցով բանակցություններ վարել հայ ազգային կուսակցությունների հետ Արևմտյան Հայաստանում զինված պայքարը դադարեցնելու նպատակով[1]: ՀՅԴ կուսակցության հետ բանակցություններ վարելու համար, Ժնև էին ժամանում Օսմանյան կայսրության արտաքին գործերի նախարարի խորհրդական Արթին փաշա Դադյանի որդին՝ Տիրան բեյ Դադյանը, որը սուլթանական դիվանագիտական ասպարեզում զբաղեցնում էր Բրյուսելում դեսպանատան երկրորդ քարտուղարի պաշտոնը, սուլթանի մյուս ներկայացուցիչ՝ Վաղինակ Աջեմյանը, Տրդատ բեյը, այնուհետև Գևորգ Բլբուլյանը: Փարիզում Վերակազմյալ հնչակյանների հետ ակտիվ բանակցությունների մեջ էր Փարիզում Օսմանյան կայսրության դեսպան՝ Մյունիր բեյը, որը Աբդուլ Համիդի լրտեսներից մեկն էր[2]: Երկարատև բանակցություններն որևէ արդյունք չարձանագրեցին, դրանք «Յըլդըզ»-ի կողմից ժամանակ շահելու և տեղեկույթ կորզելու նպատակ էին հետապնդում՝ հատկանշական է, որ սուլթանի վերը նշված ներկայացուցիչները հետախուզական ոլորտի մասնագիտացված անձիք էին:

Ուշագրավ է, որ 1890-ական թվականների կեսերին Ֆրանսիայի կառավարությունը թույլ էր տվել Օսմանյան կայսրության հետախուզությանը Փարիզում կազմավորել գործակալական ցանց և լեգալ դիրքերից գործունեություն ծավալել հայ հեղափոխականների և երիտթուրքերի դեմ[3]:

Մյունիր բեյի գործառույթներից էր նաև ի նպաստ Օսմանյան կայսրության Եվրոպայում հասարակական կարծիքի ձևավորումը, ինչը իրականացվում էր առանձին լրագրողներին, թերթերի խմբագրություններին կաշառելու միջոցով: Այս հարցում սուլթանը ևս միջոցներ չէր խնայում[4]:

Հարկ է նշել, որ տարբեր ժամանակներ Բրյուսելում, Բեռնում և Փարիզում դեսպանի պաշտոն վարած Սալիհ Մյունիրը «Յըլդըզ» հետախուզական կազմակերպության անդամ էր[5]: Փարիզում աշխատելու տարիներին նա, Լոնդոնում ստեղծած լրտեսական ցանցի միջոցով, շատ կարևոր

---

[1] Հատկանշական է, որ այս գործընթացին զուգահեռ սուլթանը գաղտնի ծառայությունների գործակալների օգնությամբ փորձեր էր կատարում ներազդել ընդդիմադիր երիտթուրքերի ղեկավարների վրա: 1897 թ. սուլթանի էմիսար Ահմեդ Ջելալեդինին հաջողվեց համոզել երիտթուրքերի մի շարք հայտնի գործիչներին վերադառնալ հայրենիք, որտեղ և նրանք ստանձնեցին տարբեր պաշտոններ: (Տե՛ս Kuran A.B., Inkilap Tarihimiz ve Ittihad ve Terakki, Istanbul, 1948, էջ 94-103):

[2] Տե՛ս Kuran A.B., Inkilap Tarihimiz ve Ittihad ve Terakki, Istanbul, 1948, էջ 54:

[3] «Նոր կեանք», 1901, թիվ 16:

[4] «Երկրի ձայն», 1907, հ. 2-րդ, էջ 11:

[5] Տե՛ս Bora İyiat, Hunlardan Günümüze Türk Derin Devleti, Ankara, 2008, էջ 39:

տեղեկություններ էր ձեռք բերել Մեծ Բրիտանիայի վարած քաղաքականության, մասնավորապես հայկական վիլայեթներում բարեփոխումների պահանջների մասին[1]:

Փորձելով սուլթանական կառավարության դեմ պայքարի ընդհանուր եզրեր գտնել՝ երիտթուրքերը ակտիվ շփումների մեջ էին գտնվում բալկանյան և հայկական հեղափոխական կազմակերպությունների հետ: Հայ գործիչների, ինչպես նաև երիտթուրքերի դեմ հետախուզական աշխատանքների կատարման գործառույթներն իրականացվող գլխավոր անձանցից էր երիտթուրքական շարժման աջ թևի ղեկավար, «Միզան» թերթի խմբագիր Մուրադ բեյը: Եվրոպայում իր առաքելությունը կատարելուց հետո, Կ.Պոլիս վերադառնալով, Մուրադ բեյը «Յըլդըզին» հանձնեց այն անձանց ցուցակը, որոնք նրա հետ քաղաքական նամակագրություն էին ունեցել ու տեղեկություններ հաղորդել[2]: Օսմանյան հետախուզությունն իթթիհադականների միջոցով՝ չարաշահելով մասնավորապես ՀՅԴ գործիչների վստահությունը, լավատեղյակ էր այդ կուսակցության ծրագրերի, նպատակների, մասնաճյուղերի գործունեության մասին, ինչպես նաև զենքի պահեստների վայրերին, ինչը կործանարար էր արևմտահայության համար:

Երրորդ ենթագլխում՝ «Զանգվածային կոտորածները Արևմտյան Հայաստանում և Փոքր Ասիայի հայաբնակ վայրերում «Յըլըդըզ»-Համիդիե-4-րդ բանակ եռանկյունու համատեքստում (1894-1896 թթ)», ներկայացրել ենք հայ ազգային կուսակցությունների կազմավորման և երկրի արևելքում սուլթանի դեմ հայերի, քրդերի, ասորիների համատեղ հնարավոր ապստամբություն բարձրացնելու գործոնները:

Սուլթանական գաղտնի ծառայությունների գործելակերպը հաստատող փաստ նշել ենք 1895 թ. Բաբը Ալիի ցույցը: Ինչպես Օսմանյան բանկի գրավման, այնպես էլ այս ցույցի դեպքում իշխանությունները, նախապես տեղեկացված լինելով դրա կազմակերպման մասին[3], ոչ թե կանխեցին այն, այլ զինեցին սոֆթաներին, զինվորներին հագցրեցին ուսանողական արտահագուստ և տարան հայերի դեմ[4]: Ցեղասպան քաղաքականության իրագործման համար կարևոր հանգամանք էր ի նպաստ Օսմանյան կայսրությանը միջազգային կարծիքի ձևավորման խնդիրները: Ոստիկանությունը ձգտում էր որպես գործակալների հավաքագրել մամուլի ղեկավարներին, խմբագիրներին: Ինչպես նշում է հայ պարբերականը. «Համիդի իշխանության տարիներին անթիվ և անհամար խմբագիրներ սիրաշահվում էին տաճկական մեդալներով ու շքանշաններով»[5]:

---

[1] Bora İyiat, նշված աշխ., էջ 39-40:

[2] «Նոր դար», 1897, թիվ 149:

[3] Նազըմ փաշայի հուշերը. Հայոց դահիճը կը պատմէ, «Յառաջ», Փարիզ, 1931, թիվ 1628:

[4] Тунян В., Младотурки и Армянский вопрос, 1908-1912, с. 91.

[5] «Մուրճ», 1907, թիվ 1:

Միջազգային հանրության համար՝ Օսմանյան կայսրությունում հայաջինջ գործողությունները «լեգալացման» ուղղությամբ աշխատանքներում ոստիկանությունը հանրագրեր էր պատրաստում ու հայերին հարկադրում ստորագրել դրանք: Բիթլիսի, Բալուի, Մարաշի հայերի կողմից հարկադրաբար ստորագրված հանրագրով՝ իրենք էին ուզում կոտորել մուսուլմաններին, իսկ թուրքական զորքի օգնությամբ վերականգնվել է կարգուկանոնը[1]:

Այսպիսով՝ 1894-1896 թթ. կոտորածների իրագործման համար Օսմանյան կայսրությունում կիրառվեցին հատուկ ծառայություններին բնորոշ նոր տեխնոլոգիաներ, որոնք ժառանգեց, զարգացրեց և գործադրեց «Հատուկ կազմակերպություն»-ը Մեծ Եղեռնի իրականացման ժամանակ:

Նոր գործելաոճն էր. հայերի հանդեպ գրգռվում և սաստկանում էր մահմեդականության ատելությունն ու բռնությունները, հայերի կոտորածները սկսում էր իշխանությունների կողմից զինած խուժանը և ոչ թէ բանակը կամ ոստիկանությունը, հաճախ ջարդարար գործողությունները սկսվում էին ոչ թե տեղացիների, այլ ուրիշ վայրերից բերված մարդկանց միջոցով, որպեսզի նրանց չճանաչեին, հետագա բարդություններից խուսափելու համար: Նույն տրամաբանությունն էր ընկած կոտորածներում բանակի և ոստիկանության օգտագործման հիմքում:

Չորրորդ ենթագլխում՝ «Սուլթանական գաղտնի ծառայությունների գործունեությունը Օսմանյան կայսրության ընդդիմադիր ուժերի վերահսկման ուղղությամբ (1890-1908 թթ.)» ներկայացված է 1890-ական թթ. սկզբներից արևմտահայության ազգային-ազատագրական շարժման զինված պայքարը, որի խափանմանն ուղղված թուրքական գաղտնի ծառայությունների կողմից իրականացվող գործողությունները, այդ թվում հայերին լրտեսելը, շատ մահմեդականների համար դարձավ եկամտի առատ աղբյուր[2]: Իշխանությունների նման վերաբերմունքը հայերին մղում էր դեպի հյուպատոսարաններ և դեսպանատներ, ինչն իր հերթին նրանց մի մասին նետում էր լրտեսական ծառայությունների ցանցը: Այսպես՝ Մեծ Բրիտանիայի հետախուզությունն իր գործունեությունն իրականացնում էր Օսմանյան կայսրությունում դիվանագիտական ներկայացուցչությունների ծածկի ներքո: Հյուպատոսներն ունեին մեծ թվով հայ իրազեկիչներ, որոնք տեղյակ էին պահում նրանց հայերի շրջանում կատարվող անցուդարձերին: Նրանց ձեռքի տակ էին գտնվում շարժման ակտիվիստների անունները: Ավելին՝ Արևմտյան Հայաստանում գործող ամերիկյան միսիոներներից շատերը ևս անգլիական հետախուզության գործակալներն էին[3]: Այսպիսով՝ կարող ենք փաստել, որ օսմանյան գաղտնի ծառայությունների համար հայ ազատագրական շարժման վերաբերյալ տեղեկատվական լուրջ աղբյուր էր հանդիսացել նաև բրիտանական հետախուզությունը: Այս հանգամանքը ևս իր դերը խաղած հայ

---

[1] «Հնչակ», 1895, թիվ 24:

[2] «Հնչակ», 1891, թիվ 2:

[3] British documents on Ottoman Armenians, vol. II (1880-1890), թթ. 150-154:

հեղափոխականների գործունեության ձախողման ուղղությամբ սուլթանական գաղտնի ծառայությունների կողմից տարվող աշխատանքներում:

Երրորդ գլուխը՝ «Հատուկ կազմակերպության» գործունեությունը Հայոց ցեղասպանության տարիներին» բաղկացած է չորս ենթագլուխներից:

Առաջին ենթագլուխում՝ «Հատուկ կազմակերպության» դերն ու նշանակությունը Հայոց մեծ եղեռնի իրականացման գործում» ուսումնասիրված է երիտթուրքերի կողմից հայաջինջ ծրագրերի իրականացման մեխանիզմը:

Ներկայացված է «Թեշքիլաթ-ը մահուսայի» կազմավորման գործընթացը, որի հենքն հանդիսացավ «Միություն և առաջադիմություն» Կենտրոնական կոմիտեի դիվերսիոն «ֆիդայիների կազմակերպությունը»:

1914 թ. հուլիսի 21-ին զորակոչից անմիջապես հետո երիտթուրքերի կենտրոնական կոմիտեն կազմակերպեց «Թեշքիլաթ-ը մահուսա»-ի հրոսակախմբերը, որի կազմում ընդգրկվեցին ներքին գործերի և արդարադատության նախարարությունների հրահանգով ազատ արձակված դատապարտյալ ոճրագործները:

Հետազոտմամբ պարզաբանվել են Թեշքիլաթի գործակալական ցանցի կառուցվածքը, ինչպես նաև գաղտնի աշխատանքում ներգրավելու առանձնահատկությունները: Դրա բաղադրիչն էր ռեզիդենտի կարգավիճակով գործող անձը, վերջինիս ենթարկվող լայն օպերատիվ հնարավորություններիով օժտված գաղտնի գործակալը և հաստիքային աշխատակիցը (տեսուչ), որը ղեկավարելով ռեզիդենտի և գործակալի աշխատանքները, ուղղակիորեն կազմակերպել էր Տրապիզոնի հայերի տեղահանությունն ու կոտորածը:

Համաձայն Օսմանյան արխիվի Ներքին գործերի նախարարության քաղաքական բաժնի (DH SYS) ֆոնդի 65-րդ թղթապանակի[1] տարբեր կուսակցական գործիչների նկատմամբ հավաքված մանրակրկիտ տեղեկությունները օգտագործվում էին այդ գործիչներին վարկաբեկելու և հավաքագրելու համար:

Այսպիսով՝ Հատուկ կազմակերպությունը ֆիդայական գործելաոճի հետ մեկտեղ իր մեջ յուրացրել էր նաև թուրքական գաղտնի ոստիկանության մեթոդներն ու հայ ազգային կուսակցություններին հետևելու հարցում օգտագործում էր ոստիկանության հարուստ փաստագրական բազան:

Երկրորդ ենթագլխում՝ «Հայ հետախույզների գործունեությունը Առաջին աշխարհամարտի ռուս-թուրքական Կովկասյան ռազմաճակատում» ներկայացվում է Առաջին համաշխարհային պատերազմի ռուս-թուրքական (Կովկասյան) ռազմաճակատում գործող Կովկասյան IV բանակային կորպուսի հետախուզական բաժանմունքի հայազգի հետախույզների գործունեությունը:

1915 թ. Իգդիրում գործող հետախուզական «Հայկական շտաբի» ամդամ Տիգրան Դևոյանցի, 1916–1917 թթ. Երզնկայում և Բաբերդում Սեբաստացի Մուրադի (Մուրադ Խրիմյան), սպա Չախալյանի, Տեր-Վարդանյանի հետախուզական աշխատանքների արդյունքում ռազմական հետախուզությունը

[1] BOA, DH. SYS, dosya 65, vesika 2, s. 5.

լուծում էր գլխավոր խնդիրները՝ պարզաբանվում էին թուրքական կանոնավոր բանակի և քրդական զինված միավորումների ուժերն ու դրանց ղեկավարների մտահղացումները, ինչը թույլ էր տալիս ժամանակին հակազդման միջոցներ ձեռնարկել[1]:

Գերմանական հետախուզության ղեկավար գնդապետ Վալտեր Նիկոլային, որն առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ ծառայում էր օսմանյան բանակում, հայ հետախույզների գործունեությունը գնահատել է հետևյալ կերպ. «Հայերը՝ որպես լրտեսներ շատ վճռական և սարսափելի էին: Նրանք այստեղ ևս թուրքերին շատ դժվարություններ էին հարուցում, որը զգալիորեն նպաստում էր հայերի նկատմամբ միջոցառումների ուժեղացմանը»[2]:

Երրորդ ենթագլխում՝ «Թուրքական գաղտնի ծառայությունների գործունեությունը Կովկասում (1918-1921 թթ.)» ներկայացված է Կովկասում գործող «Հատուկ կազմակերպության» կառուցվածքը, գործակալական ցանցը, ինչպես նաև վերջինիս կողմից ուղղորդվող վտարանդիության քաղաքական կազմակերպությունները և զինված ջոկատները: 1919-1922 թթ. ազգայնական շարժման ռազմավարական ծրագրի նպատակներից էր աշխարհաքաղաքական իրավիճակի փոփոխությունների պայմաններում Կովկասն օգտագործել որպես պատնեշ: Այս խնդրում կարևոր դեր էր վերապահված կովկասյան մահմեդական քաղաքական կառույցներին: Դրությունն ավելի էր բարդանում, երբ քեմալականները, սատարելով Ադրբեջանին, այժմ անձամբ ասպարեզ էին գալիս և առաջին շարքերում, իրենց սպաներով, չավուշներով, թնդանոթներով ու ռազմամթերքով՝ ուժ էին տալիս Հայաստանի մահմեդականների բնակության շրջանների ըմբոստացմանը:

1920 թ. մայիսին թուրքական իշխանությունների ձեռնարկած միջոցառումների արդյունքում Նուրի փաշան հրահրեց Ադրբեջանի Գյանջա քաղաքում ընդվզումներ և բնակչության հարձակումը Կարմիր բանակի ստորաբաժանումների վրա[3]: Գյանջայի դեպքերը լուրջ հետևանքներ չունեցան, սակայն ակնհայտ էր թուրքական գաղտնի կազմակերպությունների սադրիչ գործողությունների փաստը, փորձ կատարելով դրանք բարդել «հայ խառնակիչների» վրա:

Թեմայի հետազոտման շրջանակներում անդրադառձել ենք հայ վրիժառուների կողմից իրագործած «Նեմեսիս» ծրագրին: Ուսումնասիրելով թուրքական հատուկ ծառայությունների որոնողական աշխատանքները հայ վրիժառուներին ձերբակալելու և պատժելու ուղղությամբ, փաստել ենք դրանց անհաջող գործողությունները:

Այսպիսով՝ հայ ժողովրդի մղած պայքարի հակազդմանն ուղղված

---

[1] ՀԱԱ, ֆ. 1267, ց. 2, գ. 201, թ. 30:

[2] Николаи В., Тайные силы. Интернациональный шпионаж и борьба с ним во время мировой войны и в настоящее время. http://militera.lib.ru

[3] Ավագյան Ա., Հյուսիսկովկասյան քաղաքական վտարանդիությունը Թուրքիայի արտաքին քաղաքականության համատեքստում 1920-1971 թթ., էջ 81:

աշխատանքներում թուրքական գաղտնի ծառայությունները իրականացրեցին այնպիսի փորձված հատուկ միջոցառումներ, ինչպիսիք էին սադրիչ գործողությունները, խժդժությունների հրահրումը, անլուր փնտրողական գործունեությունը:

Չորրորդ ենթագլխում՝ «Թուրքական գաղտնի ծառայությունները 1919-1923 թթ. և հայությունը», անդրադառձ է կատարվել նշված ժամանակահատվածում ստեղծված թուրքական գաղտնի ծառայություններին, ուսումնասիրվել է դրանց հակահայկական առանձին գործողությունները:

Կարևորվել է թուրքերի և հայերի միջև անտեսանելի ճակատում մղվող պայքարը: 1920 թ. թուրք-հայկական պատերազմի նախաշեմին՝ այս ուղղությամբ թուրքերի կողմից իրականացվող կոնկրետ գործողությունների վերաբերյալ հայ հետախույզներն արժեքավոր տեղեկություններ էին ուղարկում Հայաստանի Հանրապետություն: Հատկանշական է, որ հայկական հետախուզությունը ծպտյալ գործակալական ցանցի միջոցով գաղտնազերծել և ՀՀ է ուղարկել Թուրքիայի ռազմական նախարարության գաղտնագրված հեռագրերը (1919 թ. հոկտեմբեր-1920 թ. օգոստոս):

Ներկայացված են նաև հայ-քրդական համագործակցության դեմ ուղղված քեմալական գաղտնի ծառայությունների գործողությունները, ինչպես նաև վերջիններիս կողմից քուրդ ազդեցիք առաջնորդներին հավաքագրման մեթոդները:

Ամփոփելով աշխատանքի ընդհանրացումներն ու դրույթները կարելի է հանգել հետևյալ եզրակացությունների.

Հայ ազատագրական կազմակերպությունների գործունեությունը չեզոքացվել է թուրքական ոստիկանության կամ հետախուզության կողմից հիմնականում գործակալական ներթափանցման եղանակով:

Ինչպես կայսրության ներսում, այնպես էլ դրա սահմաններից դուրս հայ գործիչների պայքարն անլուր՝ երիտթուրքերի միջոցով, վերահսկվում էր «Յըլդըզ» հետախուզական կառույցի կողմից: Այն կործանարար էր արևմտահայության համար, քանի որ այս հանգամանքից օգտվում էր ոչ միայն Աբդուլ Համիդի հետախուզությունը. հետագայում «Առաջադիմություն և միություն» կուսակցության ձեռքում այն հանդիսացավ գործիք Մեծ եղեռնը կազմակերպելու համար:

1894-1896 թթ. կոտորածների իրագործման գործում կիրառվեցին հատուկ ծառայություններին բնորոշ նոր տեխնոլոգիաներ: Ավելին՝ նոր գործելաոճը ժառանգեց և գործադրեց «Հատուկ կազմակերպությունը»՝ Մեծ եղեռնի իրականացման ժամանակ:

Նոր գործելաոճը ներառում էր.

- կայսրության գաղտնի ծառայությունների սադրիչ գործողություններով՝ իրենց ձեռնտու միջադեպերի հրահրումը, որոնք, մի կողմից արդարացնում էին բիրտ ուժի կիրառումը, մյուս կողմից՝ օգտագործվում էին քարոզչական նպատակներով.
- ապատեղեկատվության մեթոդի կիրառման միջոցով

հետաքրքրության օբյեկտ հանդիսացող անձանց (հայերի) ուշադրությունն իրենց ձեռնտու ուղղությամբ շեղելը՝ նրանց դրդելով գաղտնի ծառայությունների կողմից վերահսկվող համապատասխան գործողությունների.

- հայերի ահաբեկված հոգեվիճակի հետ կոտորածների զուգորդումը. առանձին վայրերում հրկիզումների, պայթյունների, ձերբակալությունների մասին լուրերը միտումնավոր արագ կերպով տարածվում էին ողջ արևմտահայության շրջանում.

- հայերի նկատմամբ կոնկրետ պաշտոնատար անձանց կողմից իրականացվող երկդիմի քաղաքականությունը՝ հայերին «միամտացնելու» մարտավարությունը.

- հայերի կոտորածների սկսելը իշխանությունների աջակցությամբ զինված խուժանի, ոչ թե անմիջականորեն բանակի կամ ոստիկանության կողմից.

- հետագա բարդություններից խուսափելու համար ջարդարար գործողությունները ոչ թե տեղացիների, այլ ուրիշ վայրերից բերված մարդկանց միջոցով իրականացնելը, որպեսզի վերջիններս չճանաչվեն: Նույն տրամաբանությունն էր գործում կոտորածներում բանակի և ոստիկանության օգտագործման ժամանակ.

- օսմանյան բանտերից ձերբակալվածներին ազատ արձակելը՝ գաղտնի ծառայությունների հետ վերջիններիս համագործակցության պայմանով կամ կաշառակերությամբ, որի մեծ բաժինը հատկացվում էր պալատական «Յըլդըզ» կազմակերպությանը.

- 1890-ական թվականների ջարդերի ժամանակ փորձարկվեց ջարդարարների մի կազմակերպություն, որը Մեծ եղեռնի տարիներին հանդես եկավ «Հատուկ կազմակերպություն» անունով.

- արևմտահայության ազատագրական պայքարի թույլ կողմերից էր այն կառույցի բացակայությունը, որը պետք է զբաղվեր անհրաժեշտ տեղեկատվության ձեռք բերմամբ, ստուգմամբ, մշակմամբ և իրացմամբ: Օսմանյան Թուրքիայի գաղտնի ծառայությունների կողմից իրականացված քայքայիչ գործունեությանը հակազդելու մեխանիզմների բացակայության պայմաններում հայ ազատագրական շարժման ղեկավարները չէին տիրապետում հավաստի տեղեկությունների և արագ փոփոխվող իրավիճակին:

Կարևոր ենք համարում արձանագրել այն փաստը, որ «Հատուկ կազմակերպությունը» Հանրապետական Թուրքիայի ներկայիս հետախուզական կառույցների հիմքն է: Այդ ծառայության ժառանգորդ հանդիսացող Թուրքիայի ներկայիս Ազգային հետախուզական կազմակերպությունը (MIT), առավել կատարելագործված միջոցներով, մեթոդներով, ինչպես նաև հսկայական մարդկային ու ֆինանսական ռեսուրսներով շարունակում է հակահայկական գործունեությունը գրեթե նույն ձեռագրով և օպերատիվ-հետախուզական գործողությունների այն տրամաբանությամբ, որոնք բնորոշ էին Հայոց ցեղասպանության գործիք հանդիսացած «Հատուկ կազմակերպությանը»:

Ատենախոսության թեմայով հեղինակի հրատարակված հոդվածների ցանկ:

1. Հայ ազգային-ազատագրական պայքարի առանձին դրսևորումները 19-րդ դարավերջին և 20-րդ դարասկզբին, Հայաստան (Գիտական ամսագիր), թիվ 11, Երևան, 2010, էջ 142-146:

2. Օսմանյան կայսրության գաղտնի ծառայությունների կազմավորումն ու զարգացումը: Ազգային-ազատագրական պայքարի գործոնը, Տարածաշրջանային խնդիրներ (Գիտական ամսագիր), թիվ 3, Երևան, 2013, էջ 114-134:

3. Արևմտահայության հեղափոխական կազմակերպությունների պայքարը սուլթանական գաղտնի ծառայությունների գործունեության պայմաննորում, Տարածաշրջանային խնդիրներ (Գիտական ամսագիր), թիվ 1, Երևան, 2014, էջ 77-96:

4. «Հատուկ կազմակերպության» հայաջինջ գործունեությունը հայոց Մեծ Եղեռնի տարիներին, Հայկական բանակ, թիվ 3-4, Երևան, 2014, էջ 235-243:

5. Թուրքիայի հատուկ ծառայությունները՝ հայ-քրդական համագործակցության դեմ (1920-1930 թթ.), 21-րդ դար, («Նորավանք» գիտակրթական հիմնադրամի հանդես), թիվ 5, Երևան, 2014, էջ 76-90:

Атикян Акоп Арутюнович

Западные армяне в условиях деятельности секретных служб Османской империи (1878-1923 гг.)

Диссертация на соискание ученой степени кандидата исторических наук по специальности 07.00.01. «История Армении»

Защита состоится 25-го декабря 2015 г., в 14^{00} часов на заседании специализированного совета по Истории Армении 004 ВАК РА при Институте Истории НАН РА (0019, Ереван, пр. Маршала Баграмяна 24/4).

РЕЗЮМЕ

Диссертация посвящена национально-освободительной борьбе западных армян в Османской империи и деятельности султанских секретных служб по подавлению этой борьбы, исполнению политических решений об истреблении армянского народа для окончательного решения Армянского вопроса.

В ходе изучения темы выявлены формы и методы разведывательной деятельности турецких секретных служб, структура действовашего агентурного аппарата. Организовывая агентурное проникновение в армянскую среду, владея достоверной информацией о планах и намерениях отдельных политических руководителей армянского национального движения и тайных организаций, искусно используя ошибки последних, разведка Османской империи, затем и «Особая организация» осуществила планомерную арменоцидную деятельность.

В ходе исследования деятельности членов и руководителей ячеек армянских национальных партий по организации национального движения установлены факты проведения конспиративных мероприятий, присущих методам работы спецслужб государств, таких как отработка легенды зашифровки и маскировки лица, проникшего на территорию Западной Армении, проведение акций безличной связи с использованием тайнописи, а также применение опосредованной связи.

Диссертация состоит из введения, трех глав, заключения, списка использованной литературы и источников.

Во введении обосновываются научное значение, цели и задачи темы, методология диссертации, научная новизна и практическое значение, временные границы темы, представлен обзор использованных источников и литературы.

В первой главе диссертации-«Формирование секретных служб Османской империи и борьба западных армян (1860-70гг.)», рассматриваются вопросы генезиса секретных служб Османской империи. Специфика деятельности последних отражается в якобы раскрытом ими в 1859 г. заговоре против султана Абдул Меджита («события Кулели»). Соответствующий анализ дает основания предполагать, что в условиях требований танзимата заговор был разработанной турецкими секретными службами провокацией, создавшей благоприятную почву для начала карательных действий против христианского населения.

Во второй главе-«Роль разведывательной организации «Елдыз» в подавлении национально-освободительной борьбы западных армян (1877-1908 гг.)», представлены особенности формирования «Елдыз», его структура, агентурная сеть, применяемые формы и методы вербовки лиц, способы проверки информации. Изучена деятельность отдельных армянских революционных тайных организаций, выявлены причины их расформирования и провала. Существовавшими между ними острыми разногласиями успешно пользовалась османская разведка и полиция, которые путем внедренных в данные организации агентов вели подрывную работу. В работе изучена деятельность армянских национальных партий за рубежом, характер их сотрудничества с турецкими оппозиционными силами, в частности, с младотурками. Установлены факты разведработы руководителя правого крыла младотурецкого движения Мурад бея против последних в пользу «Елдыз». Политика Османского государства по массовому истреблению армян в 1894-1896 гг. рассмотрена в контексте действий «Елдыз», «Гамидие» и 4-ой армии. Применявшиеся турецкими секретными службами новые формы и способы карательных операций легли в основу действий «Особой организации» по осуществлению геноцида армян. Суть новых технологий истребления армян в 1894-1896 гг. заключалась в провоцировании инцидентов, подталкивающих последних к мятежу и бесспорядкам, чем перед мировой общественностью пытались оправдать применение силы против них. Как правило погромы начинал вооруженный властьями сброд, но не армия или полиция. Зачастую использовалось не местное население, а перемещенные с других территоий люди.

В третьей главе-«Деятельность «Особой организации» в годы геноцида армян» представлен процесс ее формирования, структура, источники финансирования, главной целью которой являлось истребление армян. Под предлогом переселения армян из зон боевых действий, где по пути их ждали головорезы данной организации, которые вырезали их до последнего человека. Трупы же забрасывали в заранее выкопанные ямы. В главе также изучена деятельность армянских разведчиков в Первой мировой войне на русско-турецком фронте, а также деятельность турецких секретных служб на Кавказе (1918-1921 гг.).

Обобщая результаты исследования можно сделать вывод о том, что деятельность армянских национальных организаций была нейтрализована турецкими секретными службами в основном путем агентурного проникновения, дезинформорования-введения в заблуждение руководителей движения. Слабым звеном национально-освободительной борьбы было отсутствие той струкруры, которая должна была обеспечивать сбор необходимой информации, ее проверку, анализ и реализацию.

Hatikyan Hakob Harutyun

Western Armenians in the environment of Secret Services of the Ottoman Empire (1878-1923)

Dissertation for the degree of the Doctor of History on the specialization of "History of Armenia" 07.00.01.

The defense of the dissertation will be held on December 25 , 2015, 14^{00} at the session of the Specialized Council 004 on Armenian History of SQC RA by the Institute of History of the National Academy of Sciences of RA (0019, Yerevan, Marshal Baghramyan Ave 24/4).

RESUME

The dissertation is devoted to national and liberation combat of western Armenians in the Ottoman Empire, as well as the operations of the Sultan Door designed to suppress such combat, accompanied with execution of the political decisions on extermination of the Armenian people with the objective to put final decision to the Armenian Case.

In elaborating on the topic, the ways and methods of the Turkish intelligence services have been revealed, including the agent institutional structure. In organising infiltration of agents into Armenian environments and in command of reliable information on the plans and intentions of individual political leaders of the Armenian national movement and secret societies, as well as skilfully using the mistakes and errors of the latter, the intelligence service of the Ottoman Empire - and equally the Special Organisation that superseded the former – have embarked on implementation of their consistent Armenocide activities.

Scrutiny of the operations implemented by members and leaders of Armenian national parties tailored to establish national movement, events and measures of conspiracy have been implemented which are pertinent to the methods of operations applied by numerous states. In particular, elaboration of the legends to codify and conceal the persons penetrating into the territory of the Western Armenia, holding actions of non-personified communication through cryptographic means, as well as deployment of oblique linkages and contacts, represent substantial evidence of the level of their preparedness.

The dissertation consists of the Introduction, three Chapters, Conclusions, Bibliography and indication of Sources.

The Introduction substantiates the scientific importance, objectives and goals of the topic, methodology of the dissertation, its scientific novelty and practical weight, time span of the studied topic, all the above furnished with indication of the sources and literature used in the course of elaborating the paper.

Chapter One of the dissertation, entitled *Establishment of the Secret Services of the Ottoman Empire and the Combat of the Western Armenian in 1860-70*, the genesis of the explored services in the Ottoman Empire are analysed. The specifics inherent to the

operations of the latter are reflected in the so-called disclosure of the coup against the Sultan Abdülmecid (Kuleli Incident). Analyses of the indicated events underlies a presumption that in the context of the Tanzimât requirements, the coup was but a provocation devised by Turkish secret services, which laid fertile soil to launch punitive acts against Christian population.

Chapter Two – *The Role of Intelligence Organisation Yeldiz in Suppressing National and Liberation Combat of Western Armenians in 1877-1908* – sets out the characteristic features of the establishing the Yeldiz, its structure, agent network, deployed forms and methods of enrolment and patterns of data checks. Operations implemented by individual Armenian revolutionary secret organisations have been studied, and the causes of their dismantling and failure disclosed. In particular, the acute contradictions oftentimes transformed into animosity were made successful use of by the ottoman intelligence services and police, which advanced their demolition goals through their agents infiltrated into such organisations. In exploring the operations of the Armenian national parties overseas, the nature of their cooperation with Turkish opposition, in particular, with the Young Turks, it has been revealed that Murad Bey, the right wing leader of the Young Turks movement, carried out intelligence actions against the latter to the benefit of the Yeldiz. It should also be mentioned that the Munri Bey – as a member of Yeldiz – has also been closely involved in demolition works against Armenian national forces comfortably covered by the Embassies of Turkey in Bern and Paris. The policies of Ottoman State targeting mass annihilation of the Armenians in 1894-1896 has been scrutinised in the context of Yildiz operations, Hamidiye and the 4th Army. The innovative forms and means of punitive operations deployed by Turkish secret agencies have laid grounds for the activities implemented by Special Organisation towards implementation of the Genocide of Armenians. The essence of the new genocidal technologies applied against Armenians in 1894-1896 is confined to provoking incidents forcing the Armenians towards revolt and rallies, which was and attempt to justify exercising force in the eyes of the world community. As a rule, pogroms were launched by a crowd armed by authorities, rather than by the army or police. Oftentimes, crowds from other, remote, communities were transported.

Chapter Three – *Activities of the Special Organisation in the Time of Genocide of Armenians* – details the process of the Organisation establishment, its structures, and sources of financing with the major objective of annihilation of the Armenians. On the plea of resettlement of the Armenians from the zones of military turmoil, Armenians were walked through the paths where murderers waited armed to massacre them to the last. Corpses were thrown into pre-dug pits. The Chapters also reflects on the activities of Armenian intelligence pundits in the WW1 in the Russian-Turkish front, as well as the operations of Turkish secret services in the Caucasus in 1918-1921.

In summarising the results of the study, conclusions may be drawn on the fact that the activities of Armenian national organisations was neutralised by the Turkish secret services primarily through infiltration of agents, disinformation and disorientation of the leaders of such organisations. The weak link in the national liberation fight was the absence of a structure, which should have secured collection, check, and analysis of the crucially necessary information and its realisation for the purposes of the movement.